



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՎԿԵԱՆ

Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 12864

Մարտ 17, 1966

Արժանաշնորհ
Տ. Բարզէն Աւագ Բնյ. Մագսուտեան
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Եւ Նախագահ Պատուարժան Ժիական Խորհուրդի
Քէյմպըրիժ.

Սիրելի Տէր Բարզէն,

Ստացած ենք Ձեր 1966 Մարտ 7 թուակիր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 27ին գումարուած Ձեր
Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի մասնակի ընտ-
րութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը աեղի ունեցած է թեմական կա-
նոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած
է ըստ օրինի, այսու կը վաճեցանք հետեւեալները իբրեւ անդամ ծը-
խական Խորհուրդի.

- Տիարք՝ Ժան Տէվէճեան
- Փիթըր Թալանեան
- Արամ Տիրանեան
- Տէն Տորեան
- Տիգ Մուրատեան

Կը յանձնարարենք որ փութով Առաջնորդարան դրկէք հաշուեկշիռը
Եւ Ժիական Խորհուրդի նոր դիւանի անուն-հասցէները:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ
Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը,
ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն Ձեր համայնքի
մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Եւ Գանատայի